ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2019 թվականի N 650-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 4-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների հիմնավորումները՝ համաձայն N 2 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

2019 թ. հունիսի 5
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թվականի
մայիսի 16-ի N 650-Լ որոշման

Ց Ա Ն Կ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	**Նպատակ**	**Միջոցառումներ**	**Ակնկալվող արդյունք**	**Համակատարող**	**Ժամկետ**	**Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ**
1	2	3	4	5	6	7
... **ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**						
171.	Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրում	171.1 Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում	Առկա են գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների արդյունավետության գնահատման չափանիշներ, այդ կազմակերպությունները և ստորաբաժանումները տարակարգված են ըստ գիտական գործունեության արդյունավետության	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		171.2 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում կատարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմների ներդրում	Առկա է գիտության ոլորտում կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մոդել,գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների պետական ֆինանսավորման ծավալները համապատասխանեցված են իրականացվող աշխատանքների արդյունավետությանը	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		171.3 Գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակում և իրականացում	Գիտության ոլորտի կառուցվածքային բարեփոխումների ծրագրի առկայություն՝ անհրաժեշտության դեպքում միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունների միավորում կամ ընդգրկում բուհերի կազմում, գիտական կազմակերպության և բուհի գիտական ստորաբաժանման կառավարման ու աշխատանքների կազմակերպման ժամանակակից մեխանիզմների առկայություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		171.4 «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2021-2025 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Ամրագրված են ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2021-2025 թվականներին իրականացվելիք պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները, այդ նպատակների ձեռքբերմանն ուղղված մարտավարություններ, առկա են մարտավարություններին համապատասխան միջոցառումների և արդյունքների գնահատման առանցքային ցուցանիշներ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		171.5 «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Սահմանված են ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունները, առկա են դրանց շրջանակներում իրականացվող հետազոտությունների առաջնահերթ ֆինանսավորման մեխանիզմները	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		171.6 Տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված մեխանիզմների մշակում և ներդրում	Առկա են տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման մեխանիզմները, առկա ներերկակի նշանակություն ունեցող գիտական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խրախուսման մեխանիզմները	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020թ. մարտի 2-րդ տասնօրյակ, 2022թ. մարտի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ, այդ թվում՝ տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով
172	Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում	172.1 «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Առկա են գիտության ոլորտում կարիերայի աճի ժամանակակից մեխանիզմները, ավելացված է երիտասարդ գիտնականների մասնաբաժնը գիտական աշխատողների ընդհանուր թվակազմի մեջ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		172.2 Օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրերի իրականացում	Առկա են օտարերկրյա պետություններում աշխատող բարձր վարկանիշ ունեցող հայազգի գիտնականների ՀՀ-ում հետազոտական միավորի ղեկավարման և միջազգային չափանիշներին համապատասխան աշխատանքային պայմանների ձևավորման մեխանիզմները, ավելացված է գիտական աշխատողների 35-50 տարիքային միջակայքի մասնաբաժնը ընդհանուրի մեջ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2021թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

173	Գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծում, կրթություն-գիտություն կապի ամրապնդում	173.1 Միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում	Առկա են բնագիտության և ճարտարագիտության բնագավառներում միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնող գիտական կենտրոններ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2021թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		173.2 Գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմներ	Առկա են գիտական կազմակերպություններում և բուհերում գիտանորարարական միավորներ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2021թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ, 2022թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, օրենքով չարգելված այլ աղբյուրներ, այդ թվում՝ տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով
		173.3 Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում	Առկա են գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում Եվրոպական հետազոտական տարածքում մրցունակ հետազոտական ուղղությունների առանձնացման և խրախուսման մեխանիզմներ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020թ. մայիսի 3-րդ տասնօրյակ, 2021թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

174	Հայագիտության ոլորտի առաջանցիկ զարգացում	174.1 Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում	Առկա են միջազգային մակարդակին համապատասխան հայագիտական հետազոտություն իրականացնող գիտական միավորներ, բարձրացված է հայագիտական հետազոտությունների միջազգային տեսանելիության մակարդակը	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
175	Ապահովել Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգ, գիտական աստիճանի հայցման նպատակով գիտահետազոտական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացում	175.1 ՀՀ կառավարության 09.07.2001թ. թիվ 615 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի փոփոխությունների նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Սահմանված են տարբերակված չափանիշեր Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին ըստ գիտության բնագավառների գիտական կոչումների շնորհման համար	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		175.2 Գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման անվանացանկերի վերանայում	Արդի գիտահետազոտական ուղղություններին համարժեք գիտական աստիճանաշնորհման և կոչումների շնորհման անվանացանկերը վերանայված են		2020թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		173.3 Մասնագիտական որակավորման քննությունների ծրագրերի ընդգրկման վերանայում՝ ըստ նոր անվանացանկի	Որակավորման քննությունների արդիականացված ծրագրերը համապատասխանեցված են մասնագիտությունների ընդգրկմանը		2021թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում
		175.4 Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող գիտական պարբերականների գնահատման չափանիշների մշակում	Առկա է միջազգային չափանիշներին համապատասխան գիտական պարբերականների ցանկ	գիտական կազմակերպություններ /համաձայնությամբ/	2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		175.5 Գիտական աստիճանի հայցման նպատակով գիտահետազոտական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման և գործող կարգերի պահպանման նպատակով ասպիրանտների, հայցորդների և գիտական ղեկավարման իրավունք ունեցողների համար գործընթացի լուսաբանման, գիտական աշխատանքի իրականացման տեխնոլոգիաների պարզբանման սեմինարներ և վերապատրաստ-ման դասընթացներ	Գործող կարգերին համարժեք գիտական աստիճանի հայցման նպատակով կազմակերպվում են գիտահետազոտական գործընթացներ, ձևավորվել է իրազեկված ատենախոսների և գիտական ղեկավարների հանրություն և փոխշահավետհամագործակցայինկապ, որոշակիացվել էհրատապլուծմանկարիքունեցողխնդիրների շրջանակը		2020թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետականբյուջեից լրացուցիչֆինանսավորումչի պահանջվում
176	Հայաստանի Հանրապետությունում աստիճանաշնորհման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովում՝ էլեկտրոնային «Գիտական հարթակ» ստեղծելով	176.1 Հայաստանի Հանրապետությունում գիտական կադրերի տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում	Ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում գործող գիտնականների անհատական պրոֆիլներ Աստիճանաշնորհման գործընթացում ներգրավվում են արտասահմանում գործող հայ գիտնականներ	Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	2020թ. հունվարի 2-րդտասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
		176.2 Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող գիտական պարբերականների հարթակից օգտվելու աջակցություն	Հրատարակվող գիտական պարբերականների որակը բարձրացվել է, ապահովվել է հրատարակվող գիտական նյութերի հասանելիությունն ու միջազգայնացումը		2020թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում

		176.3 Գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությունների պաշտպանության գործընթացի լուսաբանում «Գիտական հարթակում»	Գիտական աստիճանաշնորհման գործընթացի թափանցիկության, հանրայնացման և արդյունավետության բարձրացում, հանրային վերահսկողության ապահովում գործիքները ներդրված են		2021թ. հունվարի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում
177	Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում գիտական հետազոտությունների ուղղություններիարդիականացմանը, արդի պահանջներին համապատասխանող գիտական թեմաներիհստակեցմանը	177.1 Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների հետ համատեղ գիտական հետազոտության անհրաժեշտություն ունեցող թեմաների առաջադրում	Գիտահետազոտական գործունեության պետական ֆինանսավորման արդյունավետությունը բարձրացվել է երկրի տնտեսության կարիքներից բխող մասնագիտություններով արդի պահանջներին համապատասխանող գիտահետազոտական գործունեությանը աջակցելու միջոցով	ՀՀ պետական կառավարման մարմիններ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2021թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսա-վորում չի պահանջվում